Արձանագրություն N 2
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (E-AUCTION) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան 27 դեկտեմբերի 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Օհանջանյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ա. Հակոբյան
Հ. Ղազազյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Նավասարդյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Հ. Օհանջանյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին,
5. Գնահատման մասին,
6. Հարցում կատարելու մասին
7. Գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին,
8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով հայտերի բացման մասին
(Հ. Օհանջանյան)

1. Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ
2	«ՖԼԵԾ» ՍՊԸ
3	«Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին
(Հ. Օհանջանյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են:

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4.Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին
(Հ. Օհանջանյան)

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			
		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային գին
1	**սեփական տրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրման ծառայություններ**				**27735000**
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	22349250	4469850	26819100	
2	«ՖԼԵԾ» ՍՊԸ	22575000	4515000	27090000	
3	«Սիփիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	23112500	4622500	27735000	

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

5.Գնահատման մասին
(Հ. Օհանջանյան)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	1

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

6.Հարցում կատարելու մասին
(Հ. Օհանջանյան)

ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

7.Գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
(Հ. Օհանջանյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Օհանջանյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (E-AUCTION) միջոցով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման օրը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

նախագահ՝ Հ. Օհանջանյան

գնահատող անդամներ՝ Ա. Հակոբյան

Հ. Ղազազյան

քարտուղար՝ Հ. Նավասարդյան